ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԴԱԼԱՐԻԿԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
ОБЩИНА
с. ДАЛАРИК

գ. Դալարիկ
Հեռ. (0 233), 6-13-06

с. Даларик Тел. (0 233) 6-13-06

No 0056

«22» ապրիլի 2019թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ

պրն Հ.Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ.

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դալարիկ համայնքի 2019 թվականի ապրիլի 22-ի թիվ 04 արտահերթ նիստում ընդունված որոշումները N17, N18, N 19, N 20-Ն, N 21, N 22, N 23:

Առդիր 24 (քսանչորս) թերթ:

Համայնքի ղեկավար Ա.Պողոսյան

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Մուտք թիվ 11-0835-2019
«29» 04 2019 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«22» ապրիլի 2019 թ. N 17

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դալարիկ համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 22-ի թիվ 04 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝		*ԿՈՂՄ*	*ԴԵՄ*	*ՉԵՌՆՊԱՀ*
1. Ա.Ալեքսանյան	/ստորագր./			
2. Ժ.Գևորգյան	/ստորագր./			
3. Ս.Գրիգորյան	/ստորագր./			
4. Ա.Հակոբյան	/ստորագր./			
5. Վ.Ղազարյան	/ստորագր./			

6. Մ.Պետրոսյան /ստորագր./ _____ _____ _____

7. Ե.Սարգսյան /ստորագր./ _____ _____ _____

Համայնքի ղեկավար Ա.Պողոսյան

2019 թվականի

Ապրիլի 22

գ. Դալարիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Դալարիկ
համայնքի ավագանու
2019 թվականի ապրիլի 22-ի
թիվ 04 արտահերթ նիստի թիվ 17 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-Ի ԹԻՎ 04 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1. Օրակարգի հաստատում
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դալարիկ համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 01-ի «Արմավիրի մարզի Դալարիկ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 26 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին հարցը:
3. Գումար հատկացնելու մասին հարցը:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դալարիկ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի «Դալարիկ համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 52-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին հարցը:
5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդ վաճառքով օտարելու մասին հարցը:
6. Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից մրցույթային կարգով վարձակալությամբ տրամադրելու մասին հարցը:
7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դալարիկ համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքների և այդ հողատարածքների վրա ինքնակամ կառուցված շինությունները ուղղակի վաճառքով օտարելու մասին հարցը:

Ձեկ.՝ համայնքի ղեկավար Ա.Պողոսյան

Աշխատակազմի քարտուղար Մ.Հայրապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«22» ապրիլի 2019 թ. N 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 01-Ի «ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 26 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Նորմատիվ իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դալարիկ համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 01-ի <Արմավիրի մարզի Դալարիկ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին> թիվ 26 որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ԱԿԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ		ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
1.Ա.Ալեքսանյան	/ստորագր./			
2.Ժ.Գևորգյան	/ստորագր./			
3.Ս.Գրիգորյան	/ստորագր./			
4.Ա.Հակոբյան	/ստորագր./			
5.Վ.Ղազարյան	/ստորագր./			
6. Մ.Պետրոսյան	/ստորագր./			
7. Ե.Սարգսյան	/ստորագր./			

Համայնքի ղեկավար Ա.Պողոսյան

2019 թվականի

Ապրիլի 22

գ. Դալարիկ

ՀԱՎԵԼՎԱԾ2

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի Դալարիկ

համայնքի ավագանու

2019 թվականի ապրիլի 22-ի

թիվ 04 արտահերթ նիստի թիվ 18 որոշման

ՀԱՎԵԼՎԱԾ1

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի Դալարիկ

համայնքի ավագանու

2018 թվականի օգոստոսի 01-ի

թիվ 07 արտահերթ նիստի թիվ 26 որոշման

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դալարիկ համայնքի (այսուհետև՝համայնքի) կամավոր խնդիրների և դրանց լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների և իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Համայնքի կամավոր խնդիրներն են՝

1). համայնքի սոցիալապես անապահով բնակչության սոցիալական օգնության տրամադրման կազմակերպում.

2). պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի մասնակի հատուցումը.

3). համայնքի հանրակրթական դպրոցի գործունեության աջակցումը.

4). զոհված զինծառայողների, զինծառայողների, պատերազմի վետերանների, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման աջակցումը.

5). միջհամայնքային միավորումների ստեղծումը ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցությունը.

3. Համայնքի կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները իրականացնում են հետևյալ սեփական լիազորությունները՝

1). միջոցներ են ձեռնարկում զոհված զինծառայողների, զինծառայողների, պատերազմի վետերանների, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.

2). աջակցություն են ցուցաբերում միայն պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում առկա ուսուցմամբ սովորող համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի կազմակերպմանը.

3). նպաստում են համայնքի հանրակրթական դպրոցի գործունեության կազմակերպմանը.

4). աջակցում են համայնքում ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացմանը.

5). տեղական ինքնակառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կամ հանրային շահերից ելնելով միջհամայնքային միավորումների ստեղծումը, ինչպես նաև համայնքների հիմնադրած միությունների անդամակցությունը:

4. Համայնքի կամավոր խնդիրների և դրանց լուծման համար սեփական լիազորությունների իրականացման համար, համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները չեն կարող գերազանցել համայնքի այդ տարվա բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 30%-ը:

5. Կամավոր խնդիրների լուծման համար ֆինանսական միջոցների հատկացումը իրականացնում է համայնքի ղեկավարը՝ համայնքի բյուջեով նախատեսված հատկացումների համապատասխան և միայն դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման չափերի մասին ավագանու որոշումների և (կամ) համաձայնության առկայության դեպքում:

6. Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր խնդիրների լուծման համար չի պահանջվում ֆինանսական և գույքային միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

7. Կամավոր խնդիրների լուծման իրականացման աջակցություն կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:

8. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի լուծման իրականացումը նախաձեռնում է համայնքի ղեկավարը կամ համայնքի ավագանու անդամը. նախաձեռնողը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում խնդրի լուծման իրականացման վերաբերյալ աջակցությունը՝ նշելով դրա նպատակը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինասական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

9. Այն դեպքում, երբ կամավոր խնդիր լուծման իրականացումը նախաձեռնում են բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ, ապա վերջիններիս կողմից լիազորված ներկայացուցիչը (այսուհետ՝ նախաձեռնող) դրա նպատակը և անհրաժեշտության հիմնավորումը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

10. Համայնքի ղեկավարի դիմումը սույն կարգի 9-րդ կետում նշված փաստաթղթերն ստանալուց հետո՝

1) կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնվելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր խնդրի իրականացման համար գումարի մեծությունը և իր կարծիքը, ինչպես նաև կամավոր խնդրի իրականացման վերաբերյալ նախաձեռնողի ներկայացրած փաստաթղթերը և ավագանու որոշման նախագիծը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և այդ մասին տեղեկացնում է նախաձեռնողին.

2) կամավոր խնդրի լուծման իրականացմանը չհամաձայնելու դեպքում նախաձեռնողին գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ նշելով չհամաձայնելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

11. Եթե կամավոր խնդրի լուծման իրականացման նախաձեռնողը սույն կարգի 9-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում համայնքի ղեկավարից չի ստանում կամավոր խնդրի լուծման իրականացմանը չհամաձայնելու մասին գրավոր պատասխան կամ իր փաստաթղթերը համայնքի ավագանու ուղարկելու վերաբերյալ գրություն կամ եթե նախաձեռնողը համաձայն չի

կամավոր խնդրի լուծման իրականացմանը համայնքի ղեկավարի նշված փաստաթղթերի հետ միասին, իսկ կամավոր խնդրի լուծման իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու վերաբերյալ գրավոր պատասխանի առկայության դեպքում՝ այդ պատասխանի վերաբերյալ իր առարկությունները կարող է ավագանուն ուղղված դիմումը ներկայացնել համայնքապետարանի աշխատակազմ, որը պարտադիր քննարկվում է ավագանու առաջիկա նիստում:

12. Համայնքի ավագանին սույն կարգով նշված անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց, ինչպես նաև իր նախաձեռնությամբ կամավոր խնդրի լուծման հարցը քննարկում է միայն սույն կարգի 13-րդ կետում նշված սոցիալական օգնության տրամադրման հանձնաժողովի եզրակացության դեպքում և քննարկելուց հետո ընդունում է որոշում կամավոր խնդրի լուծման իրականացման համաձայնություն տալու կամ մերժելու վերաբերյալ:

Համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են՝ կամավոր խնդրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը, իսկ կամավոր խնդրի լուծման իրականացումը մերժելու դեպքում մերժելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

13. Համայնքի ավագանին զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով՝ իր որոշմամբ հասարակական հիմունքներով կազմում է մշտական գործող հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են՝ համայնքի ավագանու անդամներ, հասարակական կազմակերպությունների և միավորումների ներկայացուցիչներ, աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների մասնագետներ, ինչպես նաև համայնքի բնակիչներ և այլ շահագրգիռ անձինք, եթե մասնագետները այդ մասին նախապես տվել են իրենց համաձայնությունը.

14. Համայնքի սոցիալապես անապահով բնակչի հուղարկավորության կազմակերպման համար օգնության տրամադրման համար համայնքի ղեկավարը կարող է իր որոշմամբ նրա ընտանիքին հատկացնել յուրաքանչյուր դեպքի համար 50000/հիսուն հազար/ ՀՀ դրամի սոցիալական օգնություն և այդ մասին հաղորդում է ներկայացնում ավագանու առաջիկա նիստում, որը ավագանու կողմից ընդունվում է որպես ի գիտություն:

15. Համայնքի այլ կամավոր խնդիրների լուծման իրականացման համար համայնքի ավագանին կարող է կազմել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ:

16. Սոցիալական օգնության տրամադրման համար դիմումները մշտական գործող հանձնաժողովի կողմից քննարկելուց հետո, տալիս է կամավոր խնդրի լուծման իրականացման համար եզրակացություն, նշելով անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափը և անհրաժեշտությունը:

17. Սոցիալական օգնության տրամադրման վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչներն են՝

1). Համայնքի բնակիչ հանդիսանալը

2). սոցիալապես անապահով ընտանիքի կողմից համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պատականությունների բարեխիղճ կատարումը և սոցիալական օգնության տրամադրման դիմումի ներկայացման ժամանակ տեղական հարկերի, տուրքերի, վարձավճարների պարտք չունենալը.

18. Սոցիալապես անապահով ընտանիքների հատկացվող մեկանգամյա սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանվում է 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ: Նույն ընտանիքին տարվա ընթացքում սոցիալական օգնություն կարող է հատկացվել առավելագույնը երկու անգամ: Արգելվում է սոցիալական օգնության հատկացումը համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպության աշխատակից հանդիսացող անձանց և նրանց ընտանիքի անդամներին:

19. Սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի հատկացումը կարող է իրականացնել միայն պետական բարձրագույն առկա ուսուցմամբ սովորելու դեպքում և առավելագույնը կարող է հատկացվել տարեկան մեկ անգամ՝ ոչ ավելի քան 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով: Ուսման վարձի հատկացում չի արվում համայնքի ղեկավարի, ավագանու անդամի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպության աշխատակից հանդիսացող անձանց հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր) եթե նրանք վարում են համատեղ տնտեսություն:

20. Սույն կարգի խախտմամբ տրամադրված սոցիալական օգնության գումարները ենթակա են վերադարձման համայնքի բյուջե՝ համայնքի ղեկավարի անձնական միջոցներից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

21. Համայնքի ավագանու կողմից սույն կարգով չկարգավորված կամավոր խնդիրների լուծումների իրականացումը սահմանվում են միայն ավագանու որոշմամբ:

Դալարիկի համայնքապետարանի

աշխատակազմի քարտուղար՝ Մ.Հայրապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱԿԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«22» ապրիլի 2019թ. N 19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով, 18-րդ հոդվածի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱԿԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության <Բռնցքամարտի հայկական ազգային ֆեդերացիայի> կողմից Եվրոպայի մինչև 22 տարեկանների առաջնությանը մասնակցելու և երկրորդ պատվավոր հորիզոնականը զբաղեցնելու համար Անի Հովսեփյանին պարգևատրել 60000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱԿԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝		*ԿՈՂՄ*	*ԴԵՄ*	*ՁԵՌՆՊԱՀ*
1 .Ա.Ալեքսանյան	/ստորագր./			
2. Ժ.Գևորգյան	/ստորագր./			
3. Ս.Գրիգորյան	/ստորագր./			

4. Ա.Հակոբյան /ստորագր./ _____ _____ _____

5. Վ.Ղազարյան /ստորագր./ _____ _____ _____

6. Մ.Պետրոսյան /ստորագր./ _____ _____ _____

7. Ե.Սարգսյան /ստորագր./ _____ _____ _____

Համայնքի ղեկավար Ա.Պողոսյան

2019 թվական

Ապրիլի 22

գ. Դալարիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«22» ապրիլի 2019թ. N 20-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի <ԴԱԼԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ> ԹԻՎ 52-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի չորրորդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով,հիմք ընդունելով 01.02.2019թ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի և Դալարիկի համայնքապետարանի միջև կնքված սուբվենցիայի հատկացման թիվ 15 պայմանագիրը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դալարիկ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի «Դալարիկ համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 52-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱԿԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ		ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1 .Ա.Ալեքսանյան	/ստորագր./			
2. Ժ.Գևորգյան	/ստորագր./			
3. Ս.Գրիգորյան	/ստորագր./			
4. Ա.Հակոբյան	/ստորագր./			
5. Վ.Ղազարյան	/ստորագր./			
6. Մ.Պետրոսյան	/ստորագր./			
7. Ե.Սարգսյան	/ստորագր./			

Համայնքի ղեկավար Ա.Պողոսյան

2019 թվական

Ապրիլի 22

գ. Դալարիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Դալարիկ
համայնքի ավագանու
2019 թվականի ապրիլի 22-ի
թիվ 04 արտահերթ նիստի թիվ 20-Ն որոշման

Եկամտային մասում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ /սուբվենցիաներ/ ավելացնել 466.7 հազ. դրամ

2.Տեղական վճարներ /աղբահանության վճարներ/ ավելացնել 900.0 հազ.դրամ:

Ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Համայնքի բյուջեի 01/1/1 հատվածի 4111 հոդվածը նվազեցնել 2400.0 հազ.դրամ:
2. Համայնքի բյուջեի 01/1/1 հատվածի 4267 հոդվածն ավելացնել 500.0 հազ.դրամ:
3. Համայնքի բյուջեի 01/1/1 հատվածի 4269 հոդվածն ավելացնել 500,0 հազ.դրամ:
4. Համայնքի բյուջեի 01/6/1 հատվածի 4251 հոդվածը նվազեցնել 400,0 հազ.դրամ:
5. Համայնքի բյուջեի 01/6/1 հատվածի 4269 հոդվածն ավելացնել 400,0 հազ.դրամ:
6. Համայնքի բյուջեի 04/5/1 հատվածի 4251 հոդվածը նվազեցնել 2000,0 հազ.դրամ:
7. Համայնքի բյուջեի 04/5/1 հատվածի 4216 հոդվածն ավելացնել 1000,0 հազ.դրամ:
8. Համայնքի բյուջեի 04/5/1 հատվածի 4269 հոդվածն ավելացնել 1000,0 հազ.դրամ:
9. Համայնքի բյուջեի 05/1/1 հատվածի 4213 հոդվածն ավելացնել 2000,0 հազ.դրամ:
10. Համայնքի բյուջեի 06/4/1 հատվածի 4267 հոդվածն ավելացնել 300,0 հազ.դրամ:
11. Համայնքի բյուջեի 09/1/1 հատվածի 4637 հոդվածը նվազեցնել 1000,0 հազ.դրամ:
12. Համայնքի բյուջեի 09/1/1 հատվածի 4251 հոդվածն ավելացնել 1000,0 հազ.դրամ:
13. Համայնքի բյուջեի 11/1/2 հատվածի 4891 հոդվածն ավելացնել 466.7 հազ.դրամ:

Աշխատակազմի քարտուղար՝ Մ.Հայրապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«22» ապրիլ 2019թ. N 21

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով 24 դեկտեմբերի 2003 թվականի Հայաստանի Հանրապետության Կառավարության թիվ 1904-Ն որոշումը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դալարիկ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդ վաճառքով օտարել 1.96 հա հողատարածք /ծածկագիր 04-036-0166-0014/ գյուղ.նշանակության այլ հողատեսք,մեկնարկային գինը 132300 ՀՀ դրամ, 0.0921 հա /ծածկագիր 04-036-0005-0008/ գյուղ.նշանակության այլ հողատեսք մեկնարկային գինը 6217 ՀՀ դրամ:

2.Մասնակցության վճարը 5000 ՀՀ դրամ,մեկ քայլի չափը մեկնարկային գնի 5%-ի չափով:

3. Հանձնարարել համայնքի ղեկավարին (Ա.Պողոսյանին) իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱԿԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝		ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
1. Ա.Ալեքսանյան	/ստորագր./			
2. Ժ.Գևորգյան	/ստորագր./			
3. Ս.Գրիգորյան	/ստորագր./			
4. Ա.Հակոբյան	/ստորագր./			
5. Վ.Ղազարյան	/ստորագր./			
6. Մ.Պետրոսյան	/ստորագր./			
7. Ե.Սարգսյան	/ստորագր./			

Համայնքի ղեկավար Ա.Պողոսյան

2019 թվական

Ապրիլի 22

գ.Դալարիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱԿԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«22» ապրիլ 2019թ. N 22

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով 24 դեկտեմբերի 2003 թվականի Հայաստանի Հանրապետության Կառավարության թիվ 1904-Ն որոշումը.

ԱԿԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դալարիկ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից մրցույթային կարգով վարձակալությամբ տրամադրել 3.355 հա հողատարածք /ծածկագիր 04-036-0166-0013 գյուղ.նշանակության հինգերորդ կարգի վարելահող,1 հա մեկնարկային գինը 10000 ՀՀ դրամ:

2.Մասնակցության վճարը 5000 ՀՀ դրամ,մեկ քայլի չափը մեկնարկային գնի 5%-ի չափով:

3. Հանձնարարել համայնքի ղեկավարին (Ա.Պողոսյանին) իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱԿԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝		ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1. Ա.Ալեքսանյան	/ստորագր./			
2. Ժ.Գևորգյան	/ստորագր./			
3. Ս.Գրիգորյան	/ստորագր./			
4. Ա.Հակոբյան	/ստորագր./			
5. Վ.Ղազարյան	/ստորագր./			
6. Մ.Պետրոսյան	/ստորագր./			
7. Ե.Սարգսյան	/ստորագր./			

Համայնքի ղեկավար Ա.Պողոսյան

2019 թվական

Ապրիլի 22

գ.Դալարիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«22» ապրիլ 2019թ. N 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԱՅԴ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետով, 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումների դրույթներով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, և նկատի ունենալով,որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և համաձայն <Արծրուն Գեղամյան> Ա/Ձ-ի կողմից 19.03.2019 թվականի կազմած հողամասի շինությունների հատակագծի և բնութագրի.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Քաղաքացի Ռոբերտ Վահանի Ավագյանի /ծնվ. 25.02.1970թ/ կողմից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դալարիկ համայնքի

Երևանյան թիվ 30 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող 0.0108 հա բնակավայրի այլ հողերի վրա ինքնակամ կառուցված 43.7քմ արտաքին մակերեսով անվադողերի վերանորոգման կետը, 12.1քմ մակերեսով ծածկը և Երևանյան թիվ 28 հասցեի 0.0340 հա բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասի վրա կառուցված 170.9քմ արտաքին մակերեսով ավտոտեխսպասարկման կայանը, 8.9քմ մակերեսով ծածկը օրինականացնել և համարել Արմավիրի մարզի Դալարիկ համայնքի սեփականությունը:

1) Ինքնակամ կառույցները օրինականացնելու համար վճարել 1166220 (մեկ միլիոն հարյուր վաթսունվեց հազար երկու հարյուր քսան) ՀՀ դրամ:

2) 0.0108 հա և 0.0340 հա հողատարածքների ուղղակի վաճառքի և օրինականացման համար վճարը կազմում է 99456 (ինսունինը հազար չորս հարյուր հիսունվեց)ՀՀ դրամ:

3) Հողամասի և ինքնակամ կառույցների օրինականացման համար ընդհանուր գումարը կազմում է 1265676 (մեկ միլիոն երկու հարյուր վաթսունհինգ հազար վեց հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դալարիկ համայնքի Օրջոնիկիձեի փողոց թիվ 4/1 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող 0.0321 հա բնակավայրի այլ հողերի վրա, քաղաքացի Դավիթ Բաբկենի Ամիրխանյանի կողմից ինքնակամ կառուցված 104.6քմ արտաքին մակերեսով /88.55քմ ներքին մակերեսով/ ավտոտեխսպասարկման կայանը, 1.70քմ մակերեսով պարիսպը օրինականացնել և համարել Արմավիրի մարզի Դալարիկ համայնքի սեփականությունը:

1) Ինքնակամ կառույցը օրինականացնելու համար վճարել 538808 (հինգ հարյուր երեսունութ հազար ութ հարյուր ութ)ՀՀ դրամ:

2) 0.0321 հա հողատարածքի ուղղակի վաճառքի և օրինականացման համար վճարը կազմում է 119393 (մեկ հարյուր տասնինը հազար երեք հարյուր իննսուներեք) ՀՀ դրամ:

3)Հողամասի և ինքնակամ կառույցի օրինականացման համար ընդհանուր գումարը կազմում է 658201 (վեց հարյուր հիսունութ հազար երկու հարյուր մեկ) ՀՀ դրամ:

3.Հանձնարարել համայնքի ղեկավարին (Ա.Պողոսյան) իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթները:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝		ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
1. Ա.Ալեքսանյան	/ստորագր./			
2. Ժ.Գևորգյան	/ստորագր./			
3. Ս.Գրիգորյան	/ստորագր./			
4. Ա.Հակոբյան	/ստորագր./			
5. Վ.Ղազարյան	/ստորագր./			
6. Մ.Պետրոսյան	/ստորագր./			
7. Ե.Սարգսյան	/ստորագր./			

Համայնքի ղեկավար Ա.Պողոսյան

2019 թվականի

Ապրիլի 22

գ. Դալարիկ